№ 43
ՇԱԲԱԹ 10 ՆՈՅԵՄԲԵՐԻ
1873
ԺԶ-դ ՏԱՐԻ

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ·

Լրագրիս միջոցով ամենայն յայտարարութիւն տպագրել տալ ցանկացողը պէտք է 10 միջակ տառերի համար վճարէ 1 կոպէկ: Յայտարարութիւնները ընդունվում են և օտար լեզուներով:

Հրատարակվում է ամեն շաբաթ օր մի թերթ: Տարեկան բաժանորդագրութեան գինն է 7 ռ: Ստորագրվել կարելի է խմբագրատանը (Ս. Վարդանեանի տանը) և չամ. Ենֆիաճեանցի խանութում:

Խմբագրութիւնս խնդրում է իւր բաժանորդներին, որ նոքա, որոնք մինչև այժմ չեն վճարել լրագրիս վարձը, բարեհաճին շուտով հասուցանելու այն խմբագրութեանս:

Թիֆլիս 10-ին նոյեմբերի·

Կոստանդնուպօլսոյ վերջին լրագիրները կրկին բերին անմխիթար լուրեր: Օգոստոսի 24 ի դէպքը, որով Սրբազան Պատրիարք Հայոց կրկին հրաժարվել էր իւր աթոռը և գիջանելով ազգի կամացը յետ էր առել իւր հրաժարականը, վկայ եղաւ թէ մինչև ո՞ր աստիճան ազգային ժողովի անդամները նշանաւոր մասամբ համապատասխան չեն իրանց պաշտօնին: Շատ ծանր էր այս խօսքը մեզ արտասանել, որովհետև այդ յարգելի ժողովը ամբողջ Տաճկաստանի հայերն է ներկայացնում, միայն ճշմարտութիւնը ծածկելն էլ մեզ համար պարտազանցութիւն պիտի համարվէր: Համապատասխան չեն, ասում ենք իրանց պաշտօնին, վասն զի, ինչպէս երևում է, չունին վճռականութիւնը, չունին հաստատուն համոզմունք, չը գիտեն արժանապէս խուսափել անձանց մէջ ազգի պատիւը պահպանել, գործքը դատելով մի քանի ազդողաւ և խորզակի անձանց կըրից: Մենք զարմանում ենք, թէ ինչպէս մեր Կ. Պօլսեցի եղբարք կարող չեղան ճըշդութեամբ և պարզապէս ըմբռնել, թէ ո՞րտեղից էր ցանած այդ երկպառակութեան սերմը, չհասկացան մինչև այժմ թէ ի՞նչ խնդիրներ և մեքենայութիւնք պատրաստվում էին ընդդէմ Կ. Պօլսի ազգային ժողովի և Ս. Պատրիարքի դէմ, որ պաշտպան էր ազգի շահերին, փառաւորութեան և շահաւորութեան գերի անձանց առաջ:

Ի՞նչ պիտի մտածեն յարգոյ ազգային երեսփոխանները իրանց վիճակի վերայ Օգոստոսի 24 ից մինչև Հոկտեմբերի 3-ը, երբ Սրբազան Պատրիարքը յամառ և 'ի նախանձն նոյն առելց երկրորդ անգամ իւր հրաժարականը: Պիտի մտածէ՞ արդեօք յարգելի ազգային ժողովը, թէ որքան բարձր երևեցաւ մի կրօնաւոր իւր խղճով և անձնազոհութեամբ ամբողջ ազգի ներկայացուցիչ ժողովից: Պիտի մտածէ՞ արդեօք, թէ ազգի պատմութեան մէջ յարգոյ ժողովի ընթացքը յիշեալ ժամանակամիջոցում ի՞նչ գոյներով պէտք է նկարվի: Չէ՞ մտածում արդեօք խորհրդական երեսփոխան, որ ինքը երբև պատգամաւոր լինելն չէ պատկանում: Չէ՞ մտածում արդեօք, որ ինքը երբև սովորական անհատ կարող է իւր պատիւն ու շահը զոհել ուրիշի օգտին, բայց երբև երեսփոխան չունի այդ իրաւունքը, որովհետև իւր մէջ նա պարունակում է ազգի շահն ու պատիւը, որոնք եթէ ընդունակ չէ պաշտպանելու—պիտի հրաժարվի և ոչ թէ ներէ իրան գործիք լինելու 'ի վնաս նորան: Ցաւում ենք, որ ազգային Մեծ. երեսփոխանները մինչև այն աստիճան խոհեմութիւն և հեռատեսութիւն չունեցան, որ երբեք իրանց ճիշդ վիճակի մէջ տեսնէին, չունեցան այնքան քաղաքագիտութիւն, որ պարզ կերպիւ պահէին իրանց աչքի առաջ ազգի և եկեղեցու շահերը: Մենք ցաւում ենք, որ մի քանի՝ այն էլ ոչինչ արդիւնք ազգին ցոյց չըտւող անձինք կարող եղան վրդովել ամբողջ երեսփոխանութիւնը և նորան իւր նշանակութեան դէմ գործել տալ: Տարակոյս չը կայ, որ ժամանակը ամեն բան կ'բանայ և խղճալի ազգը, որ շատ բռնութեանց և մեքենայութեանց տարել է, կ'համբերէ և այս վնասին. միայն ո՞վ պիտի վարձատրէ նորան այս ժամանակի կորուստն և վնասը: Այս պատասխանատուութիւնը երեսփոխանութեան վերայ է: Ցաւալի է, որ այսքան գործերի վճիռները դեռ. Հայերն չեն կարողացել համոզել վարվելու այնպէս, որ ազգային ատեանը թէ Հայի վերջին խելքն է լաւ, այլ և գործադրութիւն չունենար:

Կարծում ենք, որ մեր Տաճկաստանի եղբարց պատգամաւորները պիտի նմանին իրանց Թագաւոր խնդրող գորտերին (Կռիլովի առակը) և վերջը պիտի ափսոսելով յիշեն անցեալը: Մի՞թէ մի ամբողջ ազգի ներկայացուցիչ ժողովի քաղաքագիտութիւնը այս աստիճանի վերայ պիտի լինի—էլ ինչո՞ւ է սահմանադրութիւնը, եթէ չկան գործադրող անձինք, եթէ չկան այնքան հեռատես անձինք, որոնք նորա տուած արտօնութիւններով և իրաւունքներով ազգի ապագայն բարօրելու հոգալ գիտենան. էլ ինչո՞ւ ազգի իշխանութիւնը երեսփոխանութիւնը սահմանադրութեամբ իւր վերայ առաւ—եթէ սա առաջվան եկեղեցականներից և ամիրաներից աւելի ազգի շահերը օտարի նպատակին և շահերին պիտի ծառայեցնէր: Այն ժամանակ ազգը անտէր էր—վնասը անձանց պատասխանատուութեան վերայ էր. իսկ այժմ ամեն բան ազգի իրան անունովն է գործվում 'ի վնաս նորա: Մեզ անհասկանալի է մի երեսփոխանական ժողով, ուր հրաժարեալ անդամները կարող լինին, երբ կ'կամենան, մասնակցել նորա նիստերին և ամբողջ ժողովը վրդովել և իրանց նպատակներին նորան ծառայեցնել: Այսպիսի ժողովը ոչ միայն ազգին օգտաւէտ, այլ և ոչ արժան է նորա ներկայացուցիչ կոչվել, մի ժողովի այսպիսի կրաւորական դեր խաղալը մեր աչքում շատ աւելի սուր է, քան մինչև անգամ նորա մէջ պատահած ամենամեծ անկարգութիւնը, մանաւանդ երբ սա առաջանում է համոզմունքների զանազանութիւնից: Այստեղ գոնէ գաղափար կայ, որի համար մարդիկ հալածում են միմեանց. իսկ այնտեղ երևում է միայն լոկ բացակայութիւն բնաւորութեան, հաստատամտութեան, գաղափարի և համոզման. և այս բացատրելի է միայն մասնաւոր շահասիրութեամբ ու անտարբերութեամբ դէպի ազգի շահը:

ԱԶԳԱՅԻՆ

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Մեղուի 21 համարում կարդացի խմբագրութեան պատասխանը իմ նամակին և կամենում էի իմ դժգոհութիւնս յայտնել, միայն տկարութեան պատճառով ստիպված լինելով երթալու ար-

---

ՖԵԼԻԵՏՕՆ

Ֆելիէտոնիս ուշանալու պատճառը. լուսնի խաւարումը. Նոր Յօնան մարգարէ. Ուրիշների մեկնութիւնները ֆէլիէտոնիս ուշանալու մասին. գիւղական դօկտորի անմահ կարծիքը· "Մշակը", մարտում է "Մեղուի" նիւթը. Кавказъ 'ի պաշտպանը և պ. Երիցեանի բարեգործութիւնը. Ազգի առևտրական պահանջը. պարտատէրներ և պարտապաններ. Անշահասէր կտակատարը. կտակողը խելագարված ժամանակին է գրել իւր կտակը, ճշմարտասէր կտակատարի բարեգործութիւնը. խարդախասիրական ճշմարտասիրութեան ընկերութիւն. կէտադրութեան նշանակութիւնը. մի բարի խորհուրդ գիմնազիստներին. Թիֆլիսի հայ օրիորդներն և տիկնայք և Ս. Սանդխտեան ընկերութիւն. Ջրաղացքի և գայլի հօր գը Թիֆլիսում. Ես "խօ չի կայ ուսուց է", վճռական ընկերութեան ներկայացուցիչ եմ. իմ հասարակ են. 125 տարի արքեպտղորթական տամենքնանները ձեռքս են անցնում. ես խարում եմ. ես դարձայլ վաղեմի քաղքցին եմ:

—

Գիտեմ, պարոններ, գիտեմ, որ դուք սաստիկ մի ցանկութիւն ունիք իմանալու, թէ ինչ էր պատճառը, որ իմ ֆիլիէտօնս այսքան ուշացաւ............

Ձեզ բաւականութիւն տալու համար ես յայտնում եմ ահա, որ ամեն բան աշխարհումս մի պատճառ ունի. պիտի մի գործ լինի, որ ես էլ գրիչս առնեմ, (յայտնի բան է իմ մեղքն էլ խօ չեմ խոստովանի՝ իմ ծուլութիւնս), և չը կարծէք թէ այս էլ ամեն ջնջին բանի համար. ոչ... ահա գործ՝ նորերումս ամենքը գիտեն, որ լուսինը խաւարեցաւ: Ինչու......

Եթէ, պարոններ, ձեզանից մի ոք չը գիտէ այդ երևոյթի պատճառը, թող գնա Թիֆլիսու «Բ.....ի եկեղեցւոյ» քահանայի մօտ... .... նա հիմնալի կերպով կըմեկնէ, որ այդ մեր մեղքերի պատիժն էր............նա կը յիշեցնէ ձեզ Թիֆլիսու մի բանաստեղծի խօսքերը.

Խաւարիլ է ճշմարտութիւնը
Ցաւս ու հառաչս, սէր չըկայ,
Բռնել ենք մեր միգոյ ճիղերը
Այսուհետև խէր չըկայ:

Շատ ճշմարիտ է ասում մեր Նոր Յօնան մարգարէն, որ քարանի ծայրին կանգնած մի աչքով նայում էր խաւարած լուսնին, իսկ միւսով խաւարած քաղաքին, սպասելով այս վերջինի կործանմանը.........ճշմարիտ է ասում, որովհետև արժանապատիւ հայրը երեկ օր ձըկան փորում ապրելով այնքան է «ենկեսցէ» է կարդացել, որ նորա գլխում «եկել է» այն միտքը, «թէ ձկան փորից դուրս էլ աշխարհք չըկայ»:

—

Հասկացա՞ք, ընթերցողք, թէ ինչու ուշացաւ ֆէլիէտօնս.........

Բայց գիտեմ, որ մի քանիսը ուրիշ պատճառներ են ասում և մեղքը առաջ բերում......

Ինչ՞ արած. ամեն գլխից մի խելք է դուրս գալիս. դուրս տալուց էլ հեշտ ինչ կայ. Բայց աւելի հաստատուն և խելօք կարծիքը մի գիւղական դօկտորինն է: Եթէ կըկամենաք այն ճշգութեամբ իմանալ կարող էք գնալ «ֆարխին», (որ գտնվում է Սոլոլակի փողոցում), և կը տեսնէք այնտեղ իմաստուն դօկտորի ձեռքին Մեղուի թերթը գնելիս ու գուշակելիս նորա մահը: Այս հասկանալի է, քանի որ մեր գիւղական դօկտորները (բժիշկները) կենդանի մարմնոյ հիւանդութիւնները ու ցաւերը վաղուց յետոյ են քննում և պատճառները միմիայն դիակներով են իմանում.........

Իմանում են, այո, որպէս իմացաւ և յիշեալ գիւղական դօկտորը..................Զարմանալի գիւտ է, յիրաւի, նորա մտքի պտուղը և գիտութեան հնարագիտութիւնը...........

Մինչդեռ շատերը խելքին զօռ տալով բազմազան կարծիքներ էին յայտնում.................. մեր «գիւղական դօկտորը» իւր հանճարեղ յատկանիշ սուր դատողութեամբ ու բանականութեան անքննական իմաստոր հնարահանութեամբ զարմացրեց ներկայ գտնուողներին հետևեալ անմխիթար կարծիքով. «պատճառը նիւթի պակասութիւնն է»........

Հասկացա՞ք, պարոններ, այս հանճարաւոր խելքի եզրափակութիւնը (!!??).

—

Սակայն որքան հաւանական է այս կարծիքը, նա առաւելապէս գովելի է այդ կարծիքից հետևեալ նորա այն միտքը «թէ կենդանութիւնը պահպանելու համար հարկաւոր է, ուրեմն, ուրիշների նիւթերը խլելու սեփականացնել»:

Գիտէք, պարոններ, որ գիւղականը այս կամքը նկատողական կերպով գործադրում է ուրիշներին պատկանեալ նիւթերը իւր մտաւոր ստեղծագործութեան սեփականացնելով...... և նաև ուրիշին ուղարկելի կերակուրը կողոպտելով մարսում է իւրեան ծառայող «Մշակի» ստամոքսում..............

Հասկանալի եղաւ այժմ...........

Հասկանալի եղաւ այս խորհրդութիւնից, ընթերցող, որ իմ ֆելիէտօնիս նիւթերն էլ այն «ազատ Մշակի» փորումը պիտի լինի........

Ուրեմն էլ ինչ հարկաւորութիւն կայ մեծապատիւ դօկտորին գնալ, գուշակել ու եզրակացնել, թէ «ֆելիէտօնիս ուշանալու պատճառը նիւթի պակասութիւնն է.........» երբ «Մեղուի» համար պատրաստած նիւթը Պարոնկատանեանում, նա կուլ տուեց և մարսեց իւր «Մշակի» ստամոքսում..............

—

Ի հարկէ, լաւ բան է, եթէ ամեն մարդոյ ստամոքսը այնպէս նախանձելի մարսողութիւն ունենայ և այնպիսի էլ զօրեղ ձեռքեր ու սըրատես աչքեր, ինչպէս յիշեալ Մշակինը, որ տեսնելուն պէս ձեռք բերէ իւր կողոպուտը ու կուլ տայ, բայց վայ նորան, ով «Кавказъ»-ի պէս ստամոքսը չափազանց զարգացրել է, իսկ ձեռքերը թուլացրել ու աչքերի լոյսը պակասել......

Թէպէտ ասում եմ վայ նորան, բայց միւս կողմից երանի է նորան............

Գիտէք ինչու...........

Ցայժմ նա, կարծեմ, իրաւունք է ստանում բանի կերպով և ակներև ոչ թէ միայն կողոպտելու, այլ և պահանջելու օտարից իւր ապրուստը............Չէ՞ որ այս իրաւունքը գործադրեց յիշեալ «Кавказъ»-ը «Մշակի» վերաբերութեամբ, պահանջելով սորանից կողոպտածի մի մասը............

Լաւ բան է ի հարկէ, աղքատին ողորմութիւն անել, հիւանդին բժշկել, անօթիին օգնել...բայց ուրիշի աշխատանքով ապրել, մանաւանդ սեփականական ձևով այդ պահանջել, դա, երևի, մի նոր գրականական իրաւունք է, որ «Кавказъ»-ը առաջին անգամ յայտնեց և մտադիր է ուսումնասիրել........քանի որ նորա աշխատակից պ. Երիցեանը «գրականական բարեգործութիւն» անելով կատարեց նորա իրաւացի պահանջը..................

—

Բացի գրականական պահանջը, մեր ժամանակ զարգանում է և «առևտրական պահանջը»:

Այս երկուսը շատ քիչ են զանազանվում միմեանցից...................

Եթէ գրականական պահանջը մի ներգործական իրաւունք է, որ բանի կերպիւ խլում է ուրիշի յօղուածները, առևտրական պահանջն էլ մի կրաւորական իրաւունք է, որով պարտատէրը շատ քաղցր և մեղմ ձայնով ու չըզգուշելով պիտի դառնայ դէպի իւր պարտապանը ուղելու.............. կամ միւս պարտատէրներից թաքուն պիտի աշխատէ իւր փողերը ստանալու, կամ վերջապէս յայտնի կերպով պիտի ցոյց տայ կեղծ վեկսելները, որով ստանալով փողը, դարձեալ գնում է իւր խարդաւանքի ջերը...........հասկանում էք..............

Ինչ կայ չհասկանալու.

Այդ մեր ժամանակ «վաճառականական չընորհք է» կոչվում ....Քանի որ մերոնց մէջ միշտ մէկը միւսի փողն է մարսում, այս միւսն էլ երրորդի ապրանքն է կլանում, երրորդն էլ չորրորդի բաժինքն է թաղցնում, սա էլ ուրիշի վերջին կոպէկն է փախցնում...........

Սա Դարվինի ուսման հիման վերայ է կատարվում և այսպէս մէկը միւսից գողանալով միմեանց կենդանութիւնն են պահպանում ու վաճառականական գործերը չափազանց յառաջ են տանում..............

Այսպէս, ուրեմն, առևտուրը հետզհետէ զարգանում է ու ծաղկում, բայց միքանիսներն են միմիայն օգուտ քաղում ու հարստանում:

Այս բոլորը երբեմն թաքուն, դաղտնի կերպով է կատարվում, երբեմն էլ յայտնի, շատ լրբաբար ու չափազանց անշնորհք կերպիւ է լինում ....զորօրինակ.

Մէկը միւսից նախապէս ապրանք է առնում ու իր խանութումն է դարսում, կրկին առնում է ու դարսում, էլի ստանում է ու շարում ....խանութը վերջապէս պայթում է ու ղմբղմբում, այնտեղ «երեսուն հազար թուման է» չըխկչխկում..............

Յետոյ..............

Յետոյ այն՝ որ մի պայծառ առաւօտ այս խանութում մի այլ պարոնին են պատահում...

—Բարի լուս, Գրիգոր Փաղէիչ, եսոր ինչիս չինում.........էս ուր է Նիկոլայ Փաղէիչը.........

հարցնում է նորան կասկածաւոր պարտատէրը՝ ապրանք ծախողը:

—Ես դուքանը խո առայ...........ծախից............

«Նիկոլայ Փաղէիչը ապրանքը ինձ պէրէդատ արաւ» (!!!??), պատասխանում է նոր խանութատէրը.............

—Վա՜, վո՜նց թէ.........էդ վո՜նց կուլի.........

հարցնում է ապշած եկողը..................

—Ինչ կօսէ վոր չի լիլ, պատասխանում է հանդարտութեամբ առաջինը և ու ծխախոտի ծուխը դուրս է թողնում բերանից..................

Իսկ միւս օրը տարածվում է քաղաքում, թէ Նիկոլայ Փաղէիչը կուտրացաւ............

—

Բայց փողերը ո՞ւր տարաւ.........կը հարցնէք դուք.........

Այդ կըտեսնէք նորա գրած կտակից, որ ահա ներկայացնելու եմ ձեզ.

Ահա կտակի պատճէնը.

«Յանուն Հօր...........եայլն. 1873 թուականի սեպտեմբերի 25-ին. Ես շատ առողջ մտքի և չափազանց հաստատուն խելքի բոլէն, տեսնելով, որ մահս մօտեցել է (թէպէտ սաստիկ ցանկութիւն ունիմ էլի երկար ապրելու), և Աստուած պիտի հոգիս հանի..................ես պարտք եմ համարում խոստովանել ու զղջալ, որ թշուառ հոգիս դժոխքից ազատելու և իմ անպատկառ խղճմտանքս փրկել' ինչ մաքրուի ու թեթևանայ: Ահա խոստովանում եմ, ուրեմն, որ մեր ժամանակի պահանջին համեմատ, ես չունէի ոչ արդարութիւն, ոչ ճշմարտութիւն, ոչ անաչառութիւն: Ես էի շահակեր, աղքատներին զրկող, խեղճերին թալանող, միատասահման յետաձգեցի դրութիւնս։

Յարգոյ խմբագիր, կ՚խնդրեմ այս նամակս էլ երկրորդ նամակիս նման առանց տպելու չթողնէք և չ՚բաւականանաք մի կարճառօտ պատասխանով, ինչպէս արել էիք օրագրիդ 21 N ի մէջ։ Ճշմարիտ ասեմ, կարդալով խմբագրութեանդ պատասխանը շատ ցաւեցայ, որ խմբագրութիւնդ փոխանակ անաչառ լինելու և ամենայն ինչ բաց անելու, չէ կամեցել «Մագերուն» սիրտը ցաւեցնել, *) գուցէ խմբագրութիւնդ մի որևիցէ հանգամանք ունէր իւր աչքի առաջ, սակայն դժուար թէ հասարակութիւնը գոհ լինի Ձեր այդ վարմունքից։ Ես կարծեմ, որ խմբագրութեան գլխաւոր պարտաւորութիւններից մէկն էլ այն է, որ հասարակութեան առաջ բանայ ամեն գաղտնիք, որ տեղի է ունենում հասարակական գործերում։ Հասարակութիւնից կոպէկներով փող են ժողովում բարեգործական նպատակի համար և տարիներով իւրեանց մօտ պահելով շահեցնում են. այն ինչ աղքատ ուսանողների աչքերը, փոստի ճանապարհին նայելով, ջուր է կտրում. վերջապէս ուսանողք յոյսերը կտրելով երկու երեք անգամ առանձին նամակ գրեցին և խնդրեցին, բայց էլի ի զուր, որովհետև ոչ մի նամակին պատասխանը չ՚ստացան, մինչև անգամ տեղիդ երիտասարդներից պատգամաւոր ուղարկեցին և հազիւ հազ պատասխան ստացան, որ փողը ուղարկած է և ահա այդ հարիւր ռուբլին չորս տարի է ճանապարհին է և Պետերբուրգ դեռ ևս չէ հասել. ուստի պէտք է ենթադրել, որ այդ փողը բերելու համար կամ փոստերի ստանցիաներում ձիեր չ՚կային և կրիաներ լծեցին փոստի սայլերին և կամ ողորմութեամբ ժողոված 100 ռ., այդ պարոնները բարեգործական նպատակով կլըմբ են արել. այս վերջին ենթադրութիւնս աւելի հաւանական է, որովհետև կրիայի փոստներ ոչ մի երկրում չ՚կան. իսկ կլըմբ լինում է շատ ու շատ անգամ։ Այս խոզութիւնները խմբագրութեանդ գրեց մի ուսանող, որ շատ լաւ տեղեակ է այդ գործերին, բայց դուք չ՚գիտեմ ինչ պատճառով անյարմար համարեցիք տպագրելու. կայ արդեօք Ձեր արարմունքի մէջ անաչառութիւն, թողնում եմ Ձեզ միայն դատելու։ Ձեր այդպէս վարուելուց պէտք է եզրակացնել, որ դուք տպելու չէք և այն խորհուրդը, որ սորանից վեց տարի առաջ մի հարուստ ուսանող, ուսանողական աղքատիկ գանձարանի կոպէկներով ժողոված 100 ռուբլին չ՚ամաչեց գողունի կերպով վայելելու։ Ուսանողք իմանալով այդ պարոնի արարմունքը պահանջեցին նորանից այդ գումարը. սկզբում նա ուրացաւ, բայց յետոյ խոստացաւ վճարել և 5 տարի զանազան տեսակ բարձր գներով ուսանողաց գլխի տակը քնեցուց նոցա յուսալի քնով և վերջապէս ինքը չքացաւ Պետերբուրգից, տանելով իւր հետ աղքատ ուսանողաց օրական պարէնը։ Ես իբրև հասարակութեան անդամ խնդրում եմ խմբագրութիւնիցդ տպագրել անպատճառ այս լուրը։ Sapienti sat.

Բարդէն

Պետերբուրգ.

Ծանօթ. *) Խմբագրութիւնս ոչ թէ որևիցէ անձնից քաշվելով չհրատարակեց պ. Բարդէնի անցեալ նամակը, այլ այն պատճառով, որ նա բովանդակում էր իր մէջ անձնականութիւնք, որոնցից միշտ հեռու է պահել իրան խմբագրութիւնս։

Ամսոյս 19-ին երկուշաբթի օրը Հայ դերասանական խումբը կը ներկայացնէ յօգուտ պ. Ամիրխեանի՝ „Աւազակներ“ 1, 2 և 4 գործողութիւնքը, “Այ քեզ օյին„ վօդեվիլը և Զաւեշտ։ Աֆիշաներից տեղեկանում ենք, որ այդ ներկայացումը մեր տաղանդաւոր դերասանի վերջին հրաժարականն է. Մենք չենք կարող չյայտնել մեր խորին ցաւակցութիւնը այս առթիւ, որովհետև պ. Ամիրխեանը իբրև դերասան՝ միշտ իւր իմաստալից խաղով գրաւել է Հայ հասարակութեան ուշադրութիւնը. ուստի մեծ կորուստ պիտի համարել մի այդպիսի դերասանից զրկուիլը, մանաւանդ մեր բեմի համար, քանի որ ոչ ոք չունինք նորան փոխարինողը։ Հետաքրքիր է իմանալ ինչ պատճառներ ստիպում են մեր պատուելի դերասանին հեռանալ Թիֆլիսից և միթէ այլ ևս տեսնելու չէ Թիֆլիսի Հայ հասարակութիւնը նորան իւր աղքատիկ բեմի վերայ։ Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով, մենք ևս առաւել պարտք ենք համարում և հրաւիրում ենք հասարակութեան ուշադրութիւնը ամսոյս 19-ի ներկայացման վերայ և յուսալ ենք, որ մեր պատուելի դերասանը հազար և մի զրկանքից յետոյ պատշաճապէս կը վարձատրուի Հայ հասարակութեան կողմից, որ կը յարգէ անշուշտ ամենայն սիրով այս ներկայացումը իւր ներկայութեամբ։

ՆԵՐՔԻՆ

Քաղաքիս ջրանցքի և գազային լուսաւորութեան հարցը ստացաւ մի բոլորովին այլանդակ ընթացք։ Վեցամեայ խօսակցութիւնները, վէճերը և այլ և այլ, հարցերի քուէարկութիւնները, ինչպէս երևում է, բոլորովին ի զուր անցան. ......

Ընթերցողը անկասկած յիշում է թէ գարնան ժամանակ որպիսի ընթացք ստացաւ գազի և ջրանցքի հարցը, երբ քաղաքային ընդհանուր ժողովը քննում էր մի քանի առաջարկութիւններ, որ առած էին նորան մասնաւոր ընկերութիւններ այդ ձեռնարկութիւնների մասին։ Այս ժամանակ քաղաքագլուխը յայտնեց ժողովին սպասել առժամանակ ևս, որովհետև նա ստացել էր առաջարկութիւն մի նշանաւոր և ծանրակշիռ ընկերութեան կողմից, որ կամենում է վերցնել Թիֆլիսի ջրանցքը և գազի լուսաւորութիւնը առանց որևիցէ ապահովութեան քաղաքի կողմից։ Քաղաքագլուխը այն ժամանակ չկամեցաւ յայտնել այդ ընկերութեան անունը, գաղտնիք համարելով նորան։ Բայց չնայելով սորան, քաղաքի ներկայացուցիչները աւելի օգտաւէտ համարեցին քաղաքի համար ընդունել մի քանի անձանց առաջարկութիւնը՝ այն է տալ տեղական, ռուսաց և արտասահմանի նշանաւոր լրագրերի մէջ Թիֆլիսի քաղաքային վարչութեան յայտարարութիւնը, որով հրաւիրեն ընդունել քաղաքի ջրանցքը և գազային լուսաւորութիւնը։ Այս վճռով քաղաքը կամեցաւ մի քանի առաջարկութիւններ այլ և այլ անձանց կողմից, կշռադատելով կազմել գաղափար, թէ որքան արժէ այդ երկու ձեռնարկութիւնների իրագործումն, որ ապա դորա վերայ հիմնուելով կարողանայ մէկին յանձնելու։ Այս վճիռն թէպէտ գործնական չէր, որովհետև այն ընկերութիւնը, որ յայտնել էր իւր ցանկութիւնը որևիցէ գումարով յանձն առնուլ այդ ձեռնարկութիւնները, առաջադոյն պէտք է լաւ հետազօտել էր քաղաքի դիրքը, քննել էր նորա պլանը և նորա այլ և այլ միջոցները, որի համար նա պէտք է ծախսեր անել բաւական մեծ գումար։ Հազիւ թէ մի որևիցէ ընկերութիւն առաջուց չիմանալով քաղաքի ներկայ դրութիւնը յանձն առնէր այդ ձեռնարկութիւնը, որովհետև վերջը կարող էր իւրեան այդ բանը ձեռնտու չհամարել։ Ինչ և իցէ թէ այսպէս և թէ այնպէս կայացաւ վերոյիշեալ վճիռը և քաղաքագլխի պարտականութիւնն էր ընդհանուր ժողովի այդ վճիռը կատարել։ Բայց քաղաքագլուխը օրէնքով իրան տրուած իրաւունքի հիման վերայ չկատարեց այդ վճիռը այլ այն նշանաւոր և ծանրակշիռ ընկերութեան ներկայացուցիչների հետ գրագրութիւն բացեց և այդ ընկերութեան մասին տեղեկութիւններ հաւաքեց։ Եւ ահա հինգ ամսից յետոյ քաղաքագլուխը կոչում է արտաքոյ կարգի ժողով և առաջարկում է քաղաքի ներկայացուցիչներին այն ամենայն հանգամանքները, որ պարզեցան այս ժամանակամիջոցին։ Նա այժմ յայտնում է, որ այդ գաղտնի ընկերութիւնն է Société Générale Limited և այդ ընկերութեան ներկայացուցիչները Ռուկօ և Մաքերեանց։ Ժողովը մի աւելի ձայնով վճռեց քննել նոցա ներկայացրած պայմանները և քննելով նոցա կարգաւորից իրագործել նոցա միջնորդութեամբ այդ պայմանների հիման վերայ գազային լուսաւորութեան և ջրանցքի ձեռնարկութիւնները։ Գործը այդ դրութեան մէջ էր, երբ Մշակը և և Դրօէբան կասկածելով ընկերութեան և ներկայացուցիչների խակութեանը, հետաքրքրուել սկսան տեղեկանալ թէ այդ ընկերութեան գոյութեան և թէ ներկայացուցիչների իրաւունքների մասին այդ գործի մէջ։ Ընթերցողիս յայտնի է Մեղուի անցեալ համարում տպած հեռագրութիւնից թէ ինչ եզրակացութեան եկաւ տեղույս մամուլը։ Այժմ Մշակում այն էլ կարդում ենք, որ ռուսաց Լօնդոնի հիւպատոսից ստացած նամակը այդ ընկերութեան մասին սխալ էր թարգմանուած և յօգուտ այդ ընկերութեան, որով տուաւ այդ ընկերութեան առաջարկութեանը մի նշանակութիւն և յարգեցաւ նա քննելու ժողովի մէջ։ Բացի սորան Ռուկօյի քաղաքին առաջարկած հաւատարմաթղթերը և այլ այլ վկայականները վաւերացրած չեն ոչ մի հիւպատոսարանում։

Այսպէս ուրեմն մեր ջրանցքի և գազի գործը դարձեալ յետաձգուեցաւ։ Ի հարկէ այս կլինի մեր քաղաքացիների համար մի նոր օրինակ, որ միւս անգամ ձեռք չեն զարկելու մի այդպիսի գործին վեր ի վերոյ կերպիւ։ Գործը շուտով վերականգնելու և նորան նոր զարկ տալու հարկաւոր է, որ նշանակեն դարձեալ մի արտաքոյ կարգի ժողով և քննեն այդ գործը նորից։ Թո՛ղ մեր ներկայացուցիչները դառնան քաղաքագլխին այդ խնդրով, յոյս կայ, որ և քաղաքագլուխը չի մերժիլ նոցա խնդիրքը, որովհետև այդ բանը հայում է հասարակական օգտին և ինքն քաղաքագլուխը, որին յանձնած է քաղաքի օգուտը, աւելի քան ուրիշը պէտք է լինի նախանձախնդիր այդ բանի մէջ։

Պետերբուրգում մի ուսանողի (Գոլգևալլոյի) [illegible] լինելու առթիւ, որ մենք հաղորդում ենք ներքին լուրերում «Спб. Вѣд.» լրագրում, կարդում ենք հետևեալ նամակը, որ գրած է մի ուսանող։

ՅԱՐԳՈՅ ՊԱՐՈՆ

Կարդալով ձեր լրագրում Անտոն Գոլգևալլօ ուսանողի մահուան մասին, որի հետ միասին երեք տարի սորանից առաջ կրում էի այն չարչարանքները, որ հասցրին նորան [illegible], ես ահիցս դողացի։ Մենք ոչ թէ կենում էինք, այլ քաղցում էինք Պետերբուրգի մի թաղում Գոլգևալլօն ես և էլի մի ուսանող։ Մեր ճաշը բաղկանում էր սօխից երեք կոպ. արժողութեամբ և մի գրուանքայ հացից։ Առաւօտ և երեկոները թէյն, այն էլ յաճախ առանց շաքարի։ Սպիտակ հաց 1½ կ. արժողութեամբ մեզ համար մեծ ճոխութիւն էր։ Սենեակը լի էր սակայն սովը միշտ տանջում էր մեզ։ Աւելացրէք սորան և այն, որ մեզանից ոչ ոք վերարկու և կօշիկներ չունէր, այն ժամանակ ձեզ հասկանալի կլինի թէ այս դրութեան մէջ մտածել պարապմունքների մասին բոլորովին անկարելի էր։ Գոլգևալլօն մեզանից շատ էր տանջւում, նա չունէր ծանօթ մարդ, բացի ուսանողներից։ Կարճ միջոցից յետոյ բոլորովին սառեցան մատներս և այս հանգամանքը գուցէ ազատեց ինձ Գոլգևալլոյի վիճակից։

Իմ ծանօթները ազատեցին ինձ սովից և ցրտից, բացի սորանից ստացայ օժանդակութիւն մի կօնցերտից ստացած գումարից։

Գոլգևալլօն հիւանդացաւ, կլինիկայ

միտներին խաբող, տկարներին ճնշող, ընկերներիս հետ անիրաւ, մէկ խօսքով ես էի մի խաբեբայ մարդ....................

Թէպէտ ճշմարիտ է, իմ կենդանութեան ժամանակ այդ բոլոր մեղքերը ես մեծ արդարութիւն էի համարում, որովհետև իմ աջ ու ձախս մի և նոյն իրաւունքներն էի տեսնում, սակայն այս սարսափելի մահու բոպէիս այդ բոլոր չարութիւնները ներկայացան իմ աչքերիս առաջ ու չարագործութեանս ոգիները խղճալի դէմքով կանգնեցան ու շրջապատեցին ինձ.........

Այս է ահա պատճառը, որ ես երկիւղ կրելով նախանձոտ Աստուածանից և այն սարսափելի ոգիներից, որ պատրաստւում են ինձ այս բոպէիս քարշել, թրել ինձ ու ձգել մի խորխորատ անդունդի մէջ, վճռեցի իմ բոլոր ստացուածքը բարեգործական նպատակաւ գործ դնել, որպէս զի հոգիս փրկուի ու ապագայ նոր կեանքում չարչարանքի չենթարկուիմ։

Բայց ճանաչելով իմ բարեկամներին ու ազգականներին, որ իմ սարսափելի ոգիներից աւելի ագահութեամբ շրջապատել են փողերիս սնդուկները և գիտենալով ապագայ չարագուշակ ժամանակի հոգին, ես հիմիկուց չտապեցայ գրել կտակս, որ իմ մահից յետոյ նա կատարուի ցանկութեանս համեմատ և իմ ստացուածքը տնօրինուի իմ կամքիս համաձայն։

Իմ ստացուածքը այս է.

Պ. պ. Ա. պարտ էի քսան հազար մանէթ. Բ. պարտ էի երեսուն և հինգ հազար մանէթ, Գ. պարտ էի տասն և հինգ հազար մանէթ. Դ. տաս հազար մանէթ, Ե. չորս հազար մանէթ, Զ. եօթը հազար մանէթ և Է. քառասուն հազար մանէթ։ Եւ ունիմ նաղդ յիսուն հազար։

Այս փողերի մեծ մասը ես թաղցրի մի քանի ժամանակ առաջ, երբ դուքանս տուեցի իմ եղբօրը, սուտ կաւորացայ ու յիշեալ պարտքիս պարտատէրներին չհասցնելով, սնդուկներում պահեցի.................իսկ միւս մասն էլ, վայ իմ հոգուն, առաւել անիրաւ ճանապարհներով հաւաքեցի։

Այժմ իմ ցանկութիւնս այս է.

1. Այս բոլոր գումարը ես (համոզուելով «Մշակի» առաջարկութեանը) նուիրում եմ յօգուտ համալսարանի Հայոց Թիֆլիսում, որ իմ մահից յետոյ պիտի հիմնուի։

2. Այդ համալսարանում գիտութիւնները միմիայն հայերէն լեզուով աւանդել անկարելի է օտար լեզուով պարապել նմանապէս։

3. Որովհետև «Մշակը» ձրի դասատուութիւնը վնասակար է համարում, ես ամեն մի վարժապետին նշանակում եմ բաւարար ռոճիկ, այն է դասին մէկ ռուբլի, այն պայմանաւ միայն, որ եթէ աշակերտը դասը թողնի, նորանից բարձուի մէկ ռուբլի և կէսը............(թէ և հիւանդ լինի)։

4. Որովհետև մեր դաստիարակութեան մենաճանաչները մանկավարժութեան և ոչ մի սկզբնական օրէնքի և պահանջի ծանօթ չեն (!?)..................բայց ուրիշ կողմից և այնքան ազնիւ էլ չեն (միթէ), որ նախ կամ հետազօտէ պատրաստուէին այս ծանր գործունէութեան համար (ծրանց)...... ես որոշում եմ, որ իմ ուսումնարանում չընդունվին անփորձ և նոր մանկավարժներ, մինչև որ լրագրի միջոցով չարտայայտուին իւրեանց մանկավարժական ընդունակութիւնները (ընտիր միջոց է).........կամ մրցման սկզբունքին համեմատ չներկայացնեն մի «թարգմանած աշխատասիրութիւն»։ (Այս վերջինը շատ դժուարին է)։

5. Իմ ցանկութիւնս է, որ յիշեալ համալսարանում տեսուչ նշանակուի մի գերմանական դոկտոր, որպէս զի ուսանողների թիւը չաւելանայ և հիմնարկութիւնը յաւիտեան հաստատ մնայ։

6. Այս համալսարանում ուսուցչութեան պաշտօնը նմանապէս պիտի վարեն կամ գերմանական դոկտորներ, որպէս առաւել հմուտ մանկավարժներ, կամ տաոր ուսումնարաններում աւարտած անձինք, որոնք նախադասելի են մեր բարձր համալսարաններում աւարտած ուսանողներից։

7. Համալսարանը պիտի ունենայ հարուստ գրադարան, որ առանձին մի հոգաբարձուի (դոկտորներից ընտրած) հոգաբարձութեան ներքոյ պիտի լինի, բայց միշտ փակած ու կողպած։

8. Այս իմ ցանկութիւնս ամբողջապէս և իմ կտակս բառաբառ կատարելու համար, ես նշանակում եմ կտակակատար իմ պատուական ազգական Դ., որ միակ ճշմարտասէր մարդն է այս փուչ աշխարհում......... Ես բոլորովին հաւատում եմ նորան, որ նա շատ լաւ գիտէ իմ կամքը, հասկանում է իմ ցանկութեան պատճառը և բարեգործական նպատակս..........

9. Եթէ, Աստուած մի արասցէ, կտակակատարին մահ պատահի, կամ մի ինչ պատճառաւ նա հրաժարուի իմ կամքս իրագործելուց, ես հիմիկուց որոշում եմ, որ յայնժամ կտակակատարների պարտականութիւնը յանձնուէին դարձեալ գերմանական դոկտորներին։

—

Այս կտակը գրուեցաւ, կտակողն էլ զրկուեցաւ։ Այժմ վերջապէս Թիֆլիսի համալսարանի հարցը վերջ կըստանայ.........(շնորհիւ «Մշակ» լրագրի)։

Վերջապէս մեր հասարակութեան մէջ գտնուեցաւ մի անշահասէր կտակակատար, որ իւր ազգասիրական զգացմունքով վառուած կ՚իրագործէ հայոց համալսարանի վերաբերութեամբ զարթեցրած հարցը.........Այժմ մեր բոլոր յոյսը ճշմարտասէր կտակակատար պ. Դ. վերայ է, որի գոյութիւնը Թիֆլիսի հասարակութեան համար առաւել արդիւնաբեր կը լինի և օգտակար, քան Կովկասի սարերում գտնուած և մեր երկրի տակ թաղած բոլոր հարստութիւնը..............

Ուստի գիտենալով, որ անշահասէր և անաչառ կտակակատարները սովորութիւն ունեին հրաժարուելու իւրեանց պաշտօններից, (յայտնի չէ թէ ինչ մտքով), մեր պարտականութիւնն է դնել «Ճշմարտասէր կտակակատարի» մօտ մի առանձին խորին շնորհակալութիւն անելու և մասամբ էլ համոզելու, որ մի գուցէ իւր պաշտօնից հրաժարուի...............

Ուրեմն գնանք...............

—

«Ճշմարտասէր, անշահասէր և անաչառ կտակակատար...............Մենք եկել ենք յայտնելու ձեզ մեր սրտի խորին յարգանքը դէպի ձեզ, ճանաչելով ձեր արդարութիւնը և եռանդը հասարակական գործերի վերաբերութեամբ...............ուստի...............»

—Սպասեցէք, պարոններ, ասում է յանկարծ անշահասէր կտակակատարը...........

—Հրամայեցէք, պարոն,

—Ուրեմն դուք կտակի պատճառով էք շնորհք բերել............

—Այո, պարոն.

—Անհրաժեշտ պիտի յայտնեմ ձեզ, որ կտակը իրագործել անկարելի է։

—Միթէ...........

—Ուղիղ է, որովհետև նա գրած է կտակողի խելքի խանգարման և մտքի անհաստատութեան ժամանակ.........նա օրինաւոր չէ.........

—Ինչպէս.

—Ահա կարդացէք. «ամեն մի վարժապետին նշանակում եմ դասին մէկ ռուբլի այն պայմանաւ միայն, որ եթէ նա դասը թողնի, նորանից բարձուի մէկ ռ. և կէսը»։ Միթէ սա առողջ խելքի արտադրութիւն է.........

«Իմ ցանկութիւնս է, որ յիշեալ համալսարանում տեսուչ նշանակուի մի գերմանական դոկտոր»։ Միթէ սա խելագարութիւն չէ, երբ դոքա ոչ թէ համալսարան, այլ և մի ծխական ուսումնարան կառավարելու շնորհք չունեցան..

....

«Այս համալսարանում ուսուցչական պաշտօն նմանապէս պիտի վարեն կամ գերմանական դոկտորներ, որպէս առաւել հմուտ մանկավարժներ, կամ տաոր ուսումնարաններում աւարտած անձինք, որոնք առաւել բարձր են դասուելու, քան թէ մեր համալսարաններին ուսանողները»։ Միթէ այս խելացի մարդու եզրակացութիւն է.........

«Համալսարանի գրադարանը պիտի միշտ փակած լինի».........» Միթէ այս խելագարի միտք չէ, երբ գրադարանը աշակերտների համար է և նոցա օգտին պիտի ծառայէ։

«Եթէ կտակատարին մահ պատահի, նորա պարտաւորութիւնը պիտի յանձնուի դարձեալ գերմանական դոկտորներին.........» Միթէ առողջ դատողութիւնը այս կը ցանկանար, երբ մեր ժամանակ նոցա ձեռքով «բարեգործական փողեր» անյայտացան։

—Բայց այդ մեր ժամանակակից յառաջադէմ անձանց մտքերն են...........

—Գիժը մի քար գցեց փոսը, հազար խելօքներ պիտի հանեն նորան։

—Ուրեմն ինչ անենք, ով ճշմարտասէր կտակակատար։

—Կտակը պիտի եղծուի, ի հարկէ։

—Յետոյ համալսարանը.

—Դորա համար ես մտադիր եմ տասն հազար մանէթ յետ ձգել ու դնել բանկը, որ հարիւր տարուց յետոյ մեծ գումար կազմելով, լաւ համալսարան շինուի։

—Բայց հասարակութիւնը այժմ է պահանջում, այդ հարկաւորութիւնը հիմայ է զգալի.........

—Գիտեմ, բայց անկարելի է.........ես էլ հարկաւորութիւն եմ զգում փողի։

—

Թէպէտ անշահասէր կտակակատարը սկզբում

(Հիւանդանոց) մնաց և մնաց այնտեղ, եթէ չեմ սխալվում, մօտ երկու ամիս, այս պատճառաւ նա չկարողացաւ ստանալ նոյնպէս օժանդակութիւն: Երրորդը մեզանից շարունակ տանջվում էր մինչև վերջին ժամանակը և այսպէս հարկադրուեցաւ մնալ առաջին կուրսում երեք տարի, մէկ տարի որպէս ազատ լսող, իսկ երկու տարի որպէս ուսանող առաջին կուրսի: Մի քանի ժամանակից յետոյ ես պատահում էի Գօվկեալլցին կամ համալսարանում կամ փողոցներում: Նա խնդրում էր ամեն նորան որևիցէ գործի մասին, բայց այդպիսին չգտայ ես նորա համար: Վերջին անգամ նորան տեսայ օրստօրս մնում և խորհուրդ տուի գնալ խնդրել օժանդակութիւն այն յանձնաժողովի գումարից, որ խոբանչեւր տալի համալսարանի հիմնելու պատճառաւ ճաշերից մնում է: Գօվկեալլցն պատասխանեց՝ «Խնդրեցի, բայց մերժեցին»: Նա խնդրեց փող և ինձանից 1 ռ. 50 կ. և առաւ: Այս փողերից աւելի մի կոպէկ չունէր, բայց յուսով էր ստանալ մէկ տեղից, բայց նա յուսով էր միայն և այս անգամ, ինչպէս և միշտ:

Սովորելու ընդունակութեան համար հարկաւոր է տանել որոշ թուանշաններ: Միայն չքաւորութիւնը աչքի առաջ չեն ունենում: Բայց թէ ինչպէս կարելի էր պարապել այն դրութեան մէջ, որպիսին էր Գօվկեալլցինը:[*]

Ա. Լ.

ԿՈՒՆԷՆ ԳԻՒՂԸ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի)

Կունէնը Ղազախու գաւառի Ելիսաւետօպօլու նահանգի գիւղօրէից մինն է: Այդ գիւղը գտնվում է համարեա ձորակի մէջ, որոյ արևմտեան կողմը տարածվում են բարձր շղթայական լեռներ: Այդ լեռների միջով անցանում է մէկ նեղ ճանապարհ, որ սկսվում գիւղի իրան միջից դա՛ի վայրերով տանում է դէպի այդ սարերի մի քանի հարթանիստ գագաթները, որք չունենալով շատ բարձրութիւն գարնան միջոցին ծածկվում են զանազան ծաղիկներով և խոտերով, և այսպիսով ներկայանում են ծաղկաւէտ դաշտավայր և արօտատեղեր, որոց վերայ ամառը գիւղացիք արածում են բազմաթիւ անասունները իւրեանց հօթերով, հօտերը գառներով, որք իւրեանց բազմահնչիւն մայիններով փարատում են այդ տեղերի դող և կենդանութիւնը մեռեալ լռութիւնից, որ պատահում է միայն ձմեռուայ ամենացուրտ միջոցներին:

Այն ինչ հարաւային և հիւսիսային մասերի լեռները այնքան բարձր չեն, այնպէս որ գիւղացոց վարուցանքի համարեա մեծ մասը գտնվում է այդ լեռների վերայ. գիւղից արևելեան մասը տարածվում է, կարելի է ասել, մի նեղ բայց երկար դաշտավայր, որոյ վերայ գտնվում է գիւղացոց վարուցանքի միւս մասը և նոյնպէս նոցա այգիները, որոց պտուղի ազնուութիւնը և քաղցրութիւնը յայտնի է բազմաց:

Այդ գիւղի հարաւային կողմով անցանում է մի նեղ հովիտ, որոյ միջով արևելքից դէպի արևմուտք հոսում է մի փոքր գետակ, դորա աջ կողմից այդէն սկսում են բարձրանալ դա՛ի վայրով հարթանիստ լեռներ: Այդ ձորակի միջով նոյնպէս գետակի աջ և ձախ ափերի վերայ բուսած են բազմաթիւ ընկուզենիք, որ բազմաց յայտնի է: Դոքա իւր ժամանակին՝ աշնանը հասուցանում են գիւղի ժողովրդեանը շատ ընկոյզ, որ վաճառելով կարողանում են մասամբ դոնէ ապահովել իւրեանց կեանքը: Վերոյիշեալ գետակը նշանաւոր է իւր մէջ ընդունելով կարմրախայտ, կապուտ և ճանար կոչուած ձկներովը:

Կունէն գիւղի բնակիչները, ինչպէս ասացինք, ունին շատ այգիներ և չնայելով դոցա թուի շատութեանը՝ ժողովուրդը այնքան օգուտ չէ քաղում, որ հետևանք է նոցա ծուլութեան և տգիտութեան: Հողը բաւականին պտղաբեր է, այնպէս որ կարող է առատութեամբ արտադրել գետնախնձոր (կարտօֆէլ), սոխ, խոտոր, ճակնդեղ, բողկ, մեղրալոպ, սեխ, վարունգ, կաղամբ և այլ և այլ, որք հարկաւոր են մարդուս. բայց ցաւալի՛ սրտով եմ ասում չունին նոքա այն աշխատասիրութիւնը և ընդունակութիւնը, որ կարողանային մշակել այն բազմաթիւ այգիները և միւս գետինները, որոց հարկը միշտ վճարում են, բայց ոչինչ օգուտ չեն ստանում, կարելի է ասել, նոցանից, և վերևը յիշուած և միւս բոյսերը բոլորը օտար թուրք գիւղերից են առնում մեծ երկուսով, վճարելով դոցա տեղ հաց կամ դրամ, չնայելով որ այդ առարկաները ես շատ դժուարութեամբ են ձեռք բերում:

Ես պատահեցայ այդ գիւղում աշնանը, հենց այն օրը, որ հարևան թուրք գիւղօրէից բնակիչները բերել էին ծախելու մեղրալոպ, սեխ, վարունգ և այլն: Գիւղացիքը տեսնելով, բոլորեքեան ժողովեցան զանազան կողմերից դէպ՛ի գիւղամէջը և մէկ բոլորում շրջապատեցին այդ թուրքերին ու բոլոր այդ վաճառելի առարկաները վերցրին, որը փողով, որը ցորենով կամ գարով, որ ինչպէս գիւղացին կասէ «իրանց ընտանեաց բողազը դուրս ծոթելով»:

Գրիգոր Փիրումեանց.

Պետերբուրգի լրագրերում կարդում ենք, որ նոյնտեղի բժշկական ճեմարանի մի ուսանող մեռել է սովից. Դժբախտ երիտասարդը ծանօթներ չունէր յանձնարարած մայրաքաղաքում, որ խնդրել էր իւր համար մի գործ: Իւր ընկեր ուսանողներին չէր կամեցել դիմել օգնութիւն ուզելու, առաջին՝ որ ամաչում էր, և երկրորդ, որ նոցանից ոչ ոքին մօտիկ չէր ճանաչում. կամեցել էր օրական մշակութեամբ պարապել, բայց այնտեղ էլ ծաղր ու ծիծաղով են հանդիպել նորան: Այսպէս չորս օր քաղցած մնալուց յետոյ մեռել է.........

(Տես վերը)

Այս տարի յուլիսի 24-ին ելեւմտից նախարարը հաստատել է Օձիսեան փոխառու ընկերութեան,, կանոնադրութիւնը: Օձիսը մի գիւղ է Թիֆլիսի նահանգի Դուշեթի գաւառում: Այդ կանոնադրութիւնը գործադրուելու է 1874 թուի յունվարի 16-ից:

Ահա այդ կանոնադրութեան գլխաւոր կէտերը.

1.) Այդ ընկերութեան կազմելու համար Դուշէթի հաշտարար միջնորդ իշխան Էրիսթավը և Դուշեթ գաւառի հարուստ գիւղացիներից ոմանք դրել են 1500 մ., 3 տարի ժամանակով, 6% տարեկան:

2.) Նա ով որ ցանկանայ այդ ընկերութիւնից փող փոխ առնել, պարտաւոր է մասնակից է ընկերութեանը 50 մ. բաժին վեր առնելով և այդ գումարը կարող է դա կամ միանուագ վճարել և կամ տարէցտարի վճարելով տարեկան 1 մ. 80 կ.

3.) Բաժանորդը իրաւունք ունի ընկերութիւնից փող փոխ առնել 6—9 ամիս ժամանակով, մինչև 100 մ. տարին 12%-ով տալով ընկերութեանը մուրհակ կամ ներկայացնելով երաշխաւոր և կամ շարժական կայք ապահովութեան համար:

4.) Ընկերութիւնը շրջանական դրամագլխի զօրացնելու համար, եթէ կարիքը պահանջէ, կարող է առքեր վերցնել և փող փոխ առնել:

5.) Անդամները ունին իրաւունք դիվիդենտ (զուտ օգուտ) ստանալու, որը բաժանվում է նոցա մէջ բաժին կազմող գումարի համեմատ:

Վրաց ,,Դրօէբա'' լրագիրը հաղորդում է, որ Կախեթի երեք գիւղի հասարակութիւնը, այն է Կօղալի, Ցինանդալի և Քիսիխևի, վճռել են ընկերութեամբ հիմնել մի գիւղական փոխառու բանկ և Վրաց ,,Սասօփլօ'' լրագրի խմբագրութեան օգնութեամբ պատրաստել են դորա համար կանոնադրութիւն և առաջարկել են հոկտեմբերի 17-ին Թիֆլիսի գաւառականի հաստատութեանը:

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ

—**Փարիզ.** Միապետականները չհասան իւրեանց նպատակին. այլ ես անհնարին է կոմս Շամբորը երբև թագաւոր Ֆրանսիայի, որովհետև նա հրաժարվեցաւ անել միապետականների առաջարկած զիջողութիւնները: Շամբորը յայտնեց, որ նա երբէք չի համաձայնիլ ընդունել այժմեան երեք գոյնի դրօշակը, այլ ցանկանում է հաւատարիմ մնալ սպիտակ դրօշակին, որ Բուրբոնների նշանն է: Սպիտակ դրօշակը պահելով Շամբորը մտադիր էր մտցնել կառավարութեան այն ձևերը, որոնք փոխվել են անդառնալի կերպով Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից յետ. ուրեմն Շամբորի թագաւորելով պէտք է վերանային Ֆրանսիացոց համար այդ յեղափոխութեան բոլոր պտուղները: Կառավարութեան ղեկը կանցնէր կղերականների ձեռքը և ժողովրդի չարչարանաց և մեծամեծ զոհերի միակ արդասիքը՝ ազատութիւնը, ոտնակոխ կլինէր: Բայց կհաշտվէր արդեօ՞ք Ֆրանսիան այդ նորաձևութեան հետ և կըպահպանէր արդեօ՞ք Բուրբոններին իւր գահի վերայ երկար ժամանակ, այդ հարցերը միապետական կուսակցութեան պրոգրամմայից դուրս էին. նոցա հոգսը չէր այդ. նոքա ժողովրդի մասին չէին մտածում, այլ միայն իւրեանց անձնական համոզմունքներին և շահերին էին ծառայում: Այո՛, ծառայեցին նոքա իւրեանց անձնական շահերին և այժմ թող վայելեն իւրեանց աշխատութեան պտուղները: Նոքա ամեն ջանք ի գործ դրին Տիերին հեռացնել պաշտօնից—և յաջողեցան իւրեանց գործում: Նոքա ծիգ թափեցին հաշտեցնել Օրլէանեաններին Օրինականների հետ—և հասան իւրեանց նպատակին՝ փարիզի կոմսը՝ Օրլէանեանների ներկայացուցիչը հաշտվեցաւ կոմս Շամբորի՝ Օրինականների ներկայացուցչի հետ սորանից մի քանի ամիս առաջ Ֆրօշդօրֆում: Այս հաշտութեան հարցում Բոնապարտեանները չխառնվեցան և իւրեանց անպատուած և խաբված համարեցին միւս երկու միապետական կուսակցութիւններից. բայց այս վերջինների հոգսը չէր այդ. նոքա այնքան համոզված էին իւրեանց գործի յաջողութեան մասին, որ արհամարհեցին Բոնապարտեաններին, մոռանալով այն հանգամանքը, թէ Տիերի անկմանը նոքա պարտական էին և Բոնապարտեան կուսակցութեան ձայներին: Այս բոլորը նախապատրաստելուց յետոյ, ամառուայ

է ու աշխատում է հաստատել, որ ողորմած հայի կտակողը առաջ խելքի ժամանակ չէ գրել իւր կտակագիրը, բայց ես լսել եմ, որ այդ բանի մէջ ինքն էս շատ կասկածում է, որովհետև քաջ գիտէ, թէ «մեռածը իրանից խելառ չէր»:

Այդ ամենը գիտեն, բայց ամենքը գիտեն և այն՝ որ մեր ժամանակ ստեղծուեցաւ մի փաստաբանական նոր արհեստ, որի զօրութեամբ խելօքների կտակներն էլ եղծվում են:

Գիտէք, թէ որն է այդ արհեստը:

Դա կոչվում է «խարդախարարական ճշմարտասիրութիւն»:

Այժմ այդ արհեստը զարգանում է և օրէցօր մշակվում է, մանաւանդ կտակակատարների շնորհիւ ու օգնութեամբ...........

Յայտնի բան է, ուրեմն, որ՝ որպէս ճշմարտութեան պաշտպան, մեր անշահասէր կտակակատարը պիտի դիմէ դարձեալ ճշմարտասիրական սկզբունքին և սորա կանոնները մի առ մի սերտէ:

Այս սքանչելագործ կանոններից մեր ժամանակ մի փաստաբանական նոր խնդիր պարզվեցաւ, թէ՝

Սկիզբն իմաստութեան
Է կանոն կեղծաւորութեան,
կամ
Վախճան բարեգործութեան
Է սոփեստեան քերականութեան:

Հետեւաբար այս խնդիրը պարզելուց, անմեկնելի կերպով վճռուեցաւ դրականապէս և այն, թէ առանց քերականական և կէտադրական գիտութեան մարդ՝ և կամք կարող չէ ունենալ»...........

Հաւատանք, ընթերցող,

Պիտի հաւատանք, ի հարկէ, երբ վերոյիշեալ կտակողի կամքն էլ խափանուեցաւ հէնց այդ պատճառով............

Եթէ չգիտես, ընթերցող, թէ այդ «խարդախարարական ճշմարտասիրութեան» գիտութիւնը մինչև ինչ կատարելագործութեան է հասել, ահա քեզ պատմեմ մեր ճշմարտասէր կտակակատարի մեկնութիւնը դորա մասին, յիշեալ կտակի վերաբերութեամբ:

Կտակի առաջին յօդուածը ասում է «Այս բոլորը ես նուիրում եմ յօգուտ համալսարանի Հայոց Թիֆլիսի, որ հիմնում եմ իմ մահից յետոյ»:

Կտակակատարը մեկնում է այդ այսպէս. «թէ փողը նուիրած է Հայոց Թիֆլիսին և ոչ մեր Թիֆլիսին, որ բոլորովին Հայոց չէ»: Այս նա հաստատում է կտակողի յետեւեալ բառերով. «որ կըհիմնուի իմ մահից յետոյ», այսինքն, «Հայոց Թիֆլիսը պիտի հիմնուի իմ (կտակողի) մահից յետոյ»:

Պատուական մեկնութիւն.......հիմնալի եզրակացութիւն........(ուրեմն հաւատանք նմանապէս, որ «խարդախարարական» արհեստը քաղաքներ է շինում). Բայց երկրորդ յօդուածի բացատրութիւնը առաւել մեծ վէճերի առիթ է դարձած: Այդ էլ արժանի է ուշադրութեան, բառ առ բառ հէնց այստեղ պիտի երևայ «կէտադրական խորամանկութիւնը»:

Այդ յօդուածը մի քանիսը մեկնում են այսպէս, թէ «գիտութիւնները միմիայն հայերէն լեզուով աւանդել անկարելի է». միւսները, թէ «անկարելի է օտար լեզուով աւանդել նմանապէս» (տես 2 յօդ.)

Ո՞վ առաւել լաւ կը բացատրի, ընթերցող...
...ո՞վ կայ մանաւանդ այդ գիտութեան, որ այս տարակուսութիւնը փարատէ..........ապա թէ ոչ, կտակողը կամենալով հիմնել համալսարան, բայց մոռանալով (կամ չըյիշելով) կէտադրութեան գործադրութիւնը, մոռացել է այն, որ նորա ցանկութիւնը կախուած է կէտադրութեան կանոնից........Ուստի եղծուելու է կտակը..................

Մտաբերելով յիշեալ գիտական հետազօտութիւնը............ես ափսոսում եմ, որ մեր կտակակատարները չեն ուսումնասիրում Վանի բևեռաձև արձանագրութիւնները մեր պատմութիւնը հարստացնելու, որով անկասկած, կը հաստատեն, թէ «Հայոց ազգը չորս հազար տարի շարունակ ապիկայ է ծախել...............թէ եղել է մի Փիլիքսոնիա Քալանթարեան, որ ոչ թէ մեր ժամանակի Հայ հասարակութեան պատմութիւնը լաւ է իմացել, այլ և Փրանսիական պատերազմի և «Մեղուի» ու «Մշակի» բանակռուի հետևանքը..........

Միևնոյն հանգամանքը աչքի առաջ ունենալով, դիմում եմ դէպի գիմնազիստները այս հարցով.

—Ունէ՞ք արդեօք իրաւունք բարկանալու, որ անցեալ իմ Փիլիքսոնիայի մէջ մեղադրեցի ձեզ, թէ ձեր գործով չէք պարապում...

Թոյլ տուէք ինձ պատասխանելու, որ այդ մի խրատելի մեղադրանք է............չէ՞ որ վերոյիշեալ պատմութիւնը կարդալով դուք կը համոզուիք, որ այսուհետև բոլոր ուսումնարանների յառաջադիմութիւնը և նոցա յետադիմութիւնը ձեզանից է կախուած...Սովորեցէ՛ք, պարոններ «կէտադրական արհեստը», ապա թէ ոչ, մենք ոչ մի ուսումնարան ունենալու չենք...... իմացէք, որ կէտադրութեան խնդիրը դարձել է հասարակական խնդիր, որ ստորակէտը և համալսարանը միմեանց հետ մօտիկ կապ ունին..............Ուրեմն, որպէս հասարակութեան իրաւունք մենք պահանջում ենք ձեզանից աշխատանք, որ դուք առանց բարկանալու պիտի ընդունէք:

Թէպէտ ասացի, որ մարդկային ազգի լուսաւորութեան խնդիրը կախուած է գիմնազիստներից, բայց փոքր ինչ սխալուեցայ: Ես մոռացայ, որ մեր Հայ տիկնայքը ու օրիորդները նոցանից աւելի աշխատասէր են հանդիսանում հասարակական գործերի յառաջադիմութեան ասպարիզում:

Ճշմարիտ է, Տաճկաստանի կանանց համար «Ս. Սանդխտեան ընկերութիւն» կազմվեցաւ և այնտեղի տիկնայք ու օրիորդներ մեծ ազգասիրական եռանդ յայտնեցին, բայց Թիֆլիսաբնակ Հայ օրիորդներն ու տիկինները ձեռք ձեռքի տալով Տաճկաստանի քոյրերին իւրեանք ևս կանանց կրթութեան խնդիրը շարժելով մի ազգասիրական զգացմունք ցոյց տուեցին:

Սոքա օգնելով լուսաւորութեան գործին «լօտերեալութեան հին ընկերութիւնը» նոր եռանդով շարունակեցին.

Այժմ պարոններ, ընկերութիւնները շատանում են Թիֆլիսում.........շատանում են ոչ թէ միայն մտքի լուսաւորութեան համար այլ և փողոցների լուսաւորութեան առիթով.........

Փողոցների լուսաւորութիւնը այստեղ յիրաւի, առաւել մեծ պահանջողութեան է ենթարկված..........ըստ որում սրանով մեր գոյութիւնը ապահոված է...............

Ուստի մեր քաղաքային բարեկար վարչութիւնը անդադար հոգալով խաւար քաղաքիս համար, ամենայն ջանք գործ է դնում վերջ տալու, որքան կարելի է շուտով, որքան կարելի է շուտով, այդ խնդրի իրագործման:

Ճշմարիտ որ, մեծ անձնուիրութիւն և նախանձելի գործունէութիւն է վարչութեան կողմից շուտ մտածել և առաւել շուտ վճռել քաղաքին վերաբերեալ օգուտները ու շահերը............այն ինչ ամեն մէկը անդամներից երկար ու ծանր է խորհում իւր սեփական անձին պատկանեալ գործերը........

Ինչ բանին վերաբերենք այս երևոյթը, պարոններ, եթէ ոչ այն հանգամանքին, որ մեր քաղաքային ևս վերջապէս հասկացաւ հասարակական պահանջների նշանակութիւնը, զգաց, որպէս հասարակութեան ներկայացուցիչ, պատասխանատուութեան ծանրութիւնը, և վերջապէս իւրաքանչիւրը յայտնեց այն ճամբը, որով մարդը զանազանվում է քաղցի, ծարաւի կամ խաւարի մէջ ընկած բոյէում............

Նկարագրելով յիշեալ վարչութեան յատկութիւնները, ես բոլորովին չեմ զարմանում, որ մօտերումս մի կարգից դուրս, քաղաքային առանձին նիստ կազմելով ընտրեալները լուսաւորութեան ու ջրանցքի հարցը շատ շուտով վերջացրին:

Ինչու չշտապել.

Յիրաւի, երբ մի երկրորդ ընկերութեան կողմից ձեռնտու և օգտաւէտ առաջարկութիւն երևեցաւ.........

Թիֆլիսը դղրդեցաւ ու զարմացաւ, իմանալով այդ ընկերութեան պայմանները ու շահաւէտ առաջարկութիւնը, ասում եմ.........

Պիտի տեսնէիք, ինչպէս բարեկար և եռանդոտ ընտրեալները վազում էին դէպի քաղաքային վարչութեան դահլիճը, դաշելով «խաբեբաներ», «յիմարներ» են ներկայացուցիչներն ընկերութեան:

Նիստը բացուեցաւ...........խորհրդակցութիւնը սկսուեցաւ, առաջարկութիւնը յայտնեցաւ. քաղաքացիք ուրախ են, ընտրեալները լուռ են, բայց ծիծաղում են ընկերութեան անիմաստ առաջարկութեան վերայ......«հէնց հիմա» միայն գոչում են «շուտով», միայն ասում են, ապա թէ ոչ օգուտներից զրկուեցանք........

Ուրեմն, պարոններ, հարցը վճռած է, վերջացնելով ասում են «Société Générale Limited» ընկերութեան առաջարկութիւնը ընդունուած է, ի հարկէ:

—Անպատճառ, անշուշտ, գոչում են քաղաքի խելօք-ներկայացուցիչները յանձնելով այդ ընկերութեան ներկայացուցիչ Բռնէօրին ու Մալիրեանցին վճռի կատարումն տալը..........

Շնորհաւոր լինի...........

Գիտենալով մեր քաղաքի հարստութիւնը, ճանաչելով դորա կարիքը, իմանալով քաղաքացիների եռանդոտ լռութիւնը, և վերջապէս այն ընդունակութիւնը, որ կարող էր գտնել այդտեղ «խելացի առաջարկութիւնը», ես էլ մտադիր եմ, որպէս ներկայացուցիչ Չինաստանի «խօ չի կայ ու սուտ է» ընկերութեան, դիմել դէպի մեր քաղաքացիները ու մի չափազանց ձեռնտու պայման առաջարկել քաղաքիս մի նշանաւոր հարցի վերաբերութեամբ:

Իմ առաջարկութիւնս այս է.

«Որովհետև Թիֆլիսում արհեստագիտութեան պահանջը նմանապէս չափազանց զգալի է, և արհեստագործական ուսումնարանների խնդիրը մինչև այժմ վերջացած չէ, ես առաջարկում եմ կազմել այստեղ հազար հատ արհեստանոց, որտեղ ես ինքս կուսուցանեմ զանազան չինական արհեստներ, որպէս առաւել կատարելագործուած........չը նայելով, որ Չինաստանը խաւարասէր մի աշխարհ է, իսկ Թիֆլիսը այնքան յառաջադէմ,..............

Ահա իմ պայմանները. քաղաքը պէտք է տայ ինձ իրաւունք յընթացս 125 տարուայ, այդ ուսումնարաններից ստանալու օգուտի կէսը, իսկ միւս կէսը պէտք է գործադրվի նոյն ուսումնարանների բարեկարգութեան համար: Այս ժամանակամիջոցում քաղաքը չ'ունի իրաւունք ոչ մի արհեստագիտական ուսումնարան բանալու: Ցապահովութիւն այս պայմանների ճշգութեամբ կատարելուս ես քաղաքին կտամ մի միլլիօն դրաւական:

Ես, արդէն ներկայացայ ու ասում եմ.

—Մեծապատիւ պարոններ, ես պատրաստ եմ ընդունել բանալու հազար արհեստանոցներ Թիֆլիսում Չինաստանի արհեստներ ուսուցանելու համար:

—Ո՞վ էք դուք.

—Ես ներկայացուցիչ եմ Չինաստանի «խօ չի կայ ու սուտ է» ընկերութեան:

—Շատ պատուական. բայց ինչ պայմաններով.

Ասում եմ պայմանները.

—Համաձայն ենք ուրախութեամբ ընդունել.

—Ես էլ ուրախութեամբ ընդունում եմ.

—Ուրեմն հարցը վճռած է, ի հարկէ.

—Ի հարկէ վճռած է:

Ընթերցող, իսկ դու կը հարցնես ինձ. թէ ես ով եմ, ունիմ արդեօք ապացոյց, որ ես ներկայացուցիչ եմ ,,Խօ չի կայ ու սուտ է'' ընկերութեան, և կայ արդեօք մի այդպէս ընկերութիւն..............

Ես քեզ կըպատասխանեմ, որ ոչ ապացոյց ունիմ, ոչ ներկայացուցիչ եմ, ոչ մի յիշեալ ընկերութեան նման բան կայ.........ես խաբեցի միամիտ քաղաքացիներին...Ես եմ էլի միևնոյն

Փաղքցին.

---

[*] Ծանօթ. Վերջին լրագիրները հաղորդում են, որ յիշեալ ուսանողը մեռել է խօլերայից:

Խմբ.

ամիսները, այդպէս ժողովի նստերի դոց ժամանակ, միապետականները (առանց Բոնապարտեանների) անդադար խռովեցին երկիրը իւրեանց լրագրութեան միջոցով յայտարարելով կոմս Շամբորի թագաւորանալու մասին զանազան չափազանց կարծիքներ: Նոքա կոմս Շամբորի ծննդեան օրը բազմաթիւ ստորագրութիւններով ուղերձներ ուղարկեցին «Թագաւորին» (նոքա այլապէս չեն անուանում կոմս Շամբորին): Նոքա քանիցս պատգամաւորներ ուղարկեցին կոմսին պայմանների մասին խորհրդակցելու համար: Նոքա այս բոլորը արեցին, բոլոր հարցերում յաջողեցան, մինչև կոմս Շամբորը չարեց ոչ մի զիջողութիւն և նոքա կոր ի գլուխ ստիպւեցան համաձայնել, որ կոմս Շամբորը այլ ևս անհնարին է լինել թագաւոր Ֆրանսիայի: Այս անյաջողութիւնը զրկեց ուրեմն միապետականներին իւրեանց փափագած մտքի իրագործումից. նոքա այժմ ստիպուած են պահպանել ներկայ դրութիւնը, ուստի առաջարկեցին Մակ—Մահոնի նախագահութեան ժամանակամիջոցը երկարացնել և հաւանական է, որ ժողովը կընդունէ այդ առաջարկութիւնը: Այսպէս ուրեմն Օռլէանեան և Օրինական գումարուած միապետական խմբակցութիւնը չը յաջողեցաւ իւր գործում յաղթանութիւն հանրապետականների: Բոնապարտեաններին չենք յիշում, որովհետև նոքա իւրեանց հաղիւ թէ խոր համոզուած կարողանան լինել իւրեանց ցանկութեան իրագործման մասին գոնեա շուտ ժամանակում:

ԳԵՐՄԱՆԻԱ

—Բեռլին. Պրուս—Պրուսական պատերազմից յետոյ Պրուսիայի կառավարութիւնը, (որի պարագլուխն է իշխան Բիսմարկը) զբաղւելով տէրութեան ներքին գործերով, մեծ ուշադրութիւն դարձրեց քաթոլիկ հոգևորականների ընթացքի վերայ, որ միանգամայն չէր համապատասխանում ազգի շահերին: Քաթոլիկ հոգևորականները ծանուցելով աշխարհիս երեսին միայն իւրեանց անսխալ պապի կամքը, խիստ հակառակութիւն ցոյց տուին իշխան Բիսմարկի՝ ինչպէս նոքա անուանում են, հակաքրիստոնէական ցանկութեանը և չհնազանդեցան նորա քանի մի օրէնքներին, որոնք զրկում էին քաթոլիկ հոգևորականներին իւրեանց արտօնութիւններից: Ամենամեծ ընդդիմութիւն գտաւ քաթոլիկ եպիսկոպոսաց կողմից կառավարութեան այն կարգադրութիւնը, որով քահանայ նշանակելու իրաւունքը անցնում էր կառավարութեան իրաւասութեան ներքոյ: Այս ընդդիմութիւնը հասաւ այն աստիճանի, որ կառավարութիւնը ստիպւեցաւ դատի ենթարկել մի քանի հոգևորականների և դատապարտեց նոցա: Ի հարկէ քաթոլիկ կղերը չէր կարող գոհ մնալ կառավարութիւնից այս վարմունքի համար և քաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչը՝ անսխալական պապը հարկաւոր համարեց բողոքել Պրուսիայի թագաւորին, նորա կառավարութեան ներկայացուցչների վերայ, մի առանձին նամակով: Նորին Սրբութիւնը գանգատելով դէպի Պրուսաց թագաւորը, յիշում է այն բոլոր հալածանքները, որ կրում են քաթոլիկ հոգևորականները Գերմանիայում և յայտնում է կարծիք, թէ գուցէ բոլոր հակաքաթոլիկական կարգադրութիւնները լինում են առանց Նորին Մեծութեան գիտենալու: Պապի կարծիքով այդ անտանելի օրէնքները ընդունւած են խանգարելու դահը: Նամակի վերջում Պապը աւելացնում է, որ այս բոլոր ճշմարտութիւնները նա ստիպւած է համարձակ յայտնել, ընդունելով այն սկզբունքը, թէ ոչ միայն քաթոլիկները, այլ և բոլոր քրիստոնեաները թէ այսպէս, թէ այնպէս պատկանում են պապին: Այս նամակին Պրուսաց թագաւորը պատասխանեց մի խոհեմ և խիստ քաղաքավարի նամակով, որ մեծ տպաւորութիւն գործեց ամբողջ Եւրոպայում և մանաւանդ քաթոլիկ տէրութեանց մէջ: Նորին Մեծութիւնը իւր նամակում յայտնեց, որ իւր կառավարութեան ամեն մի կարգադրութիւն առանց նորա վաւերացնելու երբէք չէ գործադրւում ըստ սահմանադրութեան, ուստի և քաթոլիկ հոգևորականների դէմ օրէնքները առանց նորա գիտենալուն չեն հրատարակվել և գործադրվել: Իսկ ինչ վերաբերի ամեն մի քրիստոնեայի պապին պատկանելուն, Նորին Մեծութիւնը յայտնեց, որ բողոքական եկեղեցին երբէք այլ միջնորդ չէ ճանաչել մարդոց և Աստուծոյ մէջ, բացի մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսը: Այս պատասխանը մեծ հարուած տուեց պապի դիպլոմատիական միջնորդութեանը և այսուհետև հազիւ թէ Նորին Սրբութիւնը միւս անգամ ցանկանայ այդ տեսակ միջնորդութիւններ անելու:

—Գերմանիայի ռէյխստագումը պէտք է ներկայացնել առաջարկութիւն նորա մասին, որ օրէնքների մէջ մտցնեն մի յօդուած, որով որևիցէ յանցանքում մեղադրուած, բերդում բանտարկուած և յետոյ արդար համարուած անձանց, տէրութիւնը նշանակէ վարձատրութիւն, այն չափով, որ կորոշէ դատարանը:

ՍԱՔՍՈՆԻԱ

—Դրէզդէն. Պաշտօնական լրագրում հրատարակուած է մի հրովարտակ, որով ծանուցւում է իշխան Ալբերտի բազմելն ի գահ: Նոր թագաւորը խոստանում է պաշտպանել իրաւունքները և արդարութիւնը և չխնայել ոչ մի աշխատանք երկիրը բարօրեալ դրութեան հասցնելու համար: Նոր թագաւորը յայտնում է, որ բոլոր սահմանադրական օրէնքները անփոփոխ կմնան: Թագաւոր Ալբերտի հրամանով բոլոր պաշտօնատար անձանց պատուիրած է մնալ իւրեանց տեղերում:

ՏԱՃԿԱՍՏԱՆ

—Կ. Պօլիս. Տէրութեան ելևմուտքը կարգի բերելու մասին տարածուած լուրը մեծ տպաւորութիւն գործեց Կ. Պօլսում: Մեծ արդասիք են սպասում այդ հարցի համար գումարուած յանձնաժողովից:

—Սուլթանը կառավարութեան նիւթական միջոցները թեթևացնելու համար ընծայեց արքունական գանձարանին եօթը միլլիոն օսմանեան լիրայ:

—Բօսնիայի հարցի մասին Աւստրիայի և Տաճկաստանի մէջ ծագած անբաւականութիւնը խաղաղութեամբ վերջացաւ: Տաճկաց կառավարութիւնը պաշտօնապէս հրաժարւեցաւ այն մեղադրանքներից, որ նա արել էր իւր յայտնի մեղադրաթղթով: Բացի այս, տաճկաց կառավարութիւնը հրաժարեցուց Բօսնիայի նահանգապետին և մի քանի պաշտօնատար անձանց իւրեանց պաշտօնից և խոստացաւ հետամտել անբաւականութեանց միւս պատճառները ևս: Ասում են, որ տաճկաց կառավարութիւնը մտադիր է մի թուղթ ուղարկել օտար տէրութեանց, որով կյայտնէ իւր ցաւակցութիւնը պատահած վերջին անբաւականութեանց առթիւ և կը բացատրէ Աւստրիայի դէմ գրած թղթի գրելու պատճառը մասամբ յարձակմունքներից իւրեանց պաշտպանելու անհրաժեշտութեամբ:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Այս տարի Ներսիսեան ուսումնարանի չորրորդ դասատան աշակերտներից ոմանք ուսուցչաց ժողովի վճռով չփոխեցին իւրեանց դասատունը: Այժմ լսում ենք, որ այդ աշակերտները նստած են հինգերորդ դասատանը և առանց ինչ պատճառով. հինգերորդ դասատան չարժանացած աշակերտները խնդրողներ եղան ծնողաց միջնորդութեամբ թոյլ տալ նոցա լսելու հինգերորդ դասատան դասերը ոչ իբրև աշակերտ, այլ իբրև ազատ լսող: Հոգաբարձուները յարգեցին աշակերտաց խնդիրը, երևի կարծելով, թէ այն աշակերտները, որոնք ժողովի վճռով ընդունակ չը համարուեցան շարունակել իւրեանց ուսումը հինգերորդ դասատանը իբրև աշակերտ, կարող կլինեն շարունակել ուսումը իբրև ազատ լսող.......զարմանալի եզրակացութիւն............

—

Լսում ենք, որ ,,Société Générale Limited,, ընկերութիւն կազմող գլխաւոր բաժանորդագիրներից մէկն էլ մեր հայազգի փարիզաբնակ Ամբրոսիոս Գալֆայեանն է:

—

Լրագիրը հաղորդում են, որ Ամերիկայի Միսսուրի նահանգում Ս. Կատարինէի եկեղեցիներից մէկում նշանակած է քարոզիչ սևերես Քլարայ Խուայնըը: Նա արդէն 30 տարի է, որ քարոզներ էր գրում իւր պատւոր մարդու համար, իսկ այժմ ինքը պէտք է անձամբ քարոզ տայ:

—

Недѣля շաբաթաթերթին հաղորդում են, որ Զերդինեան քաղաքային ընտրողական ժողովում յուլիսի 16-ին ընտրելու ձայն տուան երկու կին, որոնք վճռականութեան վկայաթղթեր ունէին. Ընտրողները 3-ը ընդդէմ էին նոցա ընտրութեանը, բայց 24-ը համաձայնեցան այն հիման վերայ, որ կանոնադրութեան 28 յօդուածումը ասած է թէ քաղաքային ընտրողական ժողովներումը մասնակցում են "այն անձինք, որոնք ունեն վճռականութեան վկայաթղթեր,, առանց սեռերի զանազանութեան: Ասում են որ նահանգապետը չհաստատել է այդ ընտրութիւնները:

Իշխան Բիսմարկը Վիեննայում եղած ժամանակը ի թիւս այլոց ստացել է, ինչպէս գրում են „Биржа“ լրագրում, հետևեալ հեռագիրը Լվով քաղաքից "Արևելեան խնդրի խաղաղութեամբ, առանց արիւնհեղութեան վերջանալը կարելի է միայն հրեական թագաւորութեամբ, եթէ համաձայն էք, հեռագրեցէք ինձ, ես կգամ ձեզ մօտ խօսելու„: Այդ հեռագիրը Լվով քաղաքի մի հրէայի ստորագրութեամբ է:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

Նոյեմբերի 9-ին.

Ոսկին (պօլու իմպերիալ)	6-20
Արծաթը հին մանեթ	1-20
Հին աբասանոյն	—1-7$\frac{3}{4}$
Փոխանակագիր (բարաթ) Պօլսում վճարելիք Օսմանեան լիրա	6-82
Փոխանակագիր Պարսկաստանի	4-95
» անգղիական լիրան	—7-38
Խասարի բրինձն առաջին	158-
Երկրորդը	159-
Բամբակը Երևանի, փութը	4-20
Ամերիկայի սերմից	6-40
Տորոնը	8-70
Որդան կարմիր առաջինը	90-
« » երկրորդն	62-
Մետաքս Նուխու լաւը	138-
Խմբիթու	110-
Բուրդը թուշու	6-30
Թարաքամի	3-30
Շաքարը ռուս	9-40
արտասահմանեան	8-75
Շաքարաւազը	6-30
Ծխախոտը Տրապիզոնի լաւն	12-70
Սամսոնը 10կց—	36
Կեօրակի 25կց—	102ը
Բօխչայի 15կց—	34ը
Սուրճը Մոկկոյի	16-80
Լեօնգինի (հասարակ)	15-40
Մոմը բնաճարպի (ստէարին)	11-40
Ճրագուլ	5-45
Երկաթը ձողաձև (բրուսովի)	3-40
տախտակ (լիստովի)	4-
մեխացու	3-
Ցինկ	5-70
Պղինձը անգլիու	14-
տեղական	12-20
Անագը (կլայեկ)	19-
Անուշադրը (նիշադր)	8-50
Աղը	-60
Պղպեղը	11-50
Լեղակը, առաջինը	160-
» » երկրորդն	115-
Ալիւրը հասարակ	1-30
Փեսամոլինն (Ջիւալը)	17-
Ալևերդովինը 1	15-
2	13-
3	11-
Բրօդսկի ալիւր	15-
Բրինձը Լանքօրանի	—3-
Գարին	— -60
Սպիրտն 83 աստիճանի	6-30
Նաւթը	3-30
Օճառ (սպիտ)	3-40
Խէժը	11-80
Ձէթը կտաւատի	2-95
Կնճիթի (քունջութի)	4-80
Շիբն	2-60
Գլտոյն	8-50
Արճիճն	6-40
Մեղրամոմ	23-
Խունկն	7-20
Զաջն	2-40
Վերմիշել և մակարոն Ռուսաց.	5-35
տեղական	5-70
Օդեսու	5-30
Կրուպայ պերլովի	4-
Մաննի	3-50
Սագօ սպիտակն	3-40
Գրեչկնի	1-10

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏԸ գնում է Թիֆլիսից Ռուսաստան և արտասահման ամեն օր, բացի կիւրակէ օրերից:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ՝ Գօրուայ տրակտը 1) (Գորի Սուրամ, Բելոգորի, 2) Քութայիս, Նովոսենակի, Փոթի և Սուխում.) Ախալցխայ, Ախալքալաք (Ախալցխայի գաւառում), 3) Բորժոմ. 4) Երևանի տրակտը (Դիլիժան, Երևան և Նոր Բայազիդ), 5) Հին Նախիջևան, Ջուղայ, Օրդուբադ Վաղարշապատ, 6) Աղբուլաղ:

ԵՐԵՔՇԱԲԹԻ՝ 1) Բագուայ տրակտը:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ՝ Գօրուայ տրակտը, 2) Երևանի տրակտը, 3) Նոր Բայազէտ, (4 Ղարաքլիս, Ալէքսանդրապօլ:

ՈՒՐԲԱԹ՝ 1) Գօրուայ տրակտը 2) Ախալցխայ, Ախալքալաք (Ախալցխայի գաւառում) 3) Երևանի տրակտը, 4) Հին Նախիջևան, Ջուղայ, Օրդուբադ, Վաղարշապատ 5) Ղարաքլիսայ, Ալէքսանդրապօլ: 6) Նուխուայ և Կախէթի տրակտները, Աղբուլաղ:

ՇԱԲԱԹ՝ Բագուայ տրակտը (ծանր)

ՓՈԹԻ—ԹԻՖԼԻԶԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ԳՆԱՑՔԸ

ԹԻՖԼԻԶԻՑ գնում է ճանապարհորդների գնացքը առաւօտեան 8 ժ. 18 ր. և հասնում է ԽԱՇՈՒՐ 1 ժ. 11ր. և ՓՈԹԻ գիշերուայ 11 ժ 27 ր. Խառն գնացքը գնում է՝

ԹԻՖԼԻԶԻՑ երեկոյեան 8 ժ. 17 ր. և հասնում է ԽԱՇՈՒՐ առաւօտեան 4 ժ. 30 ր:

ՓՈԹՈՒՑ գնում է ճանապարհորդների գնացքը առաւօտեան 7 ժ. 38 ր. և հասնում է ԽԱՇՈՒՐ 5 ժ. 11ր և ԹԻՖԼԻԶ գիշերուայ 10 ժ. 49 ր. Խառն գնացքը գնում է՝

ԽԱՇՈՒՐԻՑ առաւօտեան 7 ժամ. 15 րոպ. և հասնում է ԹԻՖԼԻՍ 3 ժ. 13 ր. ճաշից յետոյ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ (Մուզէում) բաց է Երեքշաբթի, Ուրբաթ և կիրակի օրերը առաւօտեան 10 ժամից մինչև կէս օրից յետոյ 3 ժամը:

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ երթևեկ հիւանդների համար գտնւում է Ս. Նշան եկեղեցու մօտ Դ. Արաքելեանի տանը: Հիւանդներին ընդունում են ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամը:

—

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԳՆԱՑՈՂ ԲԺԻՇԿՆԵՐ: Երկուշաբթի—Վերլին—վիրաբուժական հիւանդութիւնների համար. Գլազացկի-երեխայոց հիւանդութիւնների համար, Գարալևիչ և Լիսիցեանց—ներքին հիւանդութիւնների համար:
Երեքշաբթի—Վերմիշեանց և Շահպարոնեան—ներքին հիւանդութիւնների համար, Գարալևիչ—կանանց և երեխայոց հիւանդութիւնների համար:
Չորեքշաբթի—Լիսիցեանց և Մելիքեանց ներքին հիւանդութիւնների համար և Գրաւովսկի—վիրաբուժական և աչքերի հիւանդութիւնների համար:
Հինգշաբթի—Վերմիշեանց ներքին հիւանդութիւնների համար, Գարալևիչ կանանց և երեխայոց հիւանդութիւնների համար:
Ուրբաթ—Լիսիցեանց և Շահպարոնեանց ներքին հիւանդութիւնների համար:
Շաբաթ-Գրաւովսկի—վիրաբուժական և աչքերի հիւանդութիւնների համար, Կոռնեկի Վերմիշեանց և Մելիքեանց—ներքին հիւանդութիւնների համար:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ բաց է ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, ժամը 12-ից մինչև կէս օրից յետոյ 5 ժամը:

«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» լրագրի խմբագրատունը, որ գտնւում է պ. Սողոմոն Վարդանեանի տանը Հեռագրատան մօտ, բաց է ամեն օր, բացի կիրակէ և տօն օրերից, առաւօտեան 11 ժամից մինչև 1 ժամը:

«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» լրագրի խմբագրութեան գրասենեակը գտնւում է պ. Հ. Էնֆիաճեանի տպարանում, Գոլովինսկի պրոսպեկտի վերայ պ. Բժշկեանց Ռօսինեանցի տանը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

«Մեծ մարդերի պատմութիւններ» անունով գիրքը (գինը 1 ռ.) կարելի է ստանալ պ. Վարդանեանի և ընկ. գրավաճառանոցում: Հարիւրով կամ յիսունով առնել ցանկացողները կարող են նոյնպէս դառնալ դէպ՝ի պ. Էնֆիաճեանի տպարանը: Հարիւրին 20% զիջումն:

Գրիգոր Տէր—Մելքիսեդէկեան:

ПОДПИСКА НА ГАЗЕТУ
"КАВКАЗЪ"
НА 1874 ГОДЪ.
ГАЗЕТА ПОЛИТИЧЕСКАЯ И ЛИТЕРАТУРНАЯ

ЦѢНА ГАЗЕТЫ: на годъ для городскихъ подписчиковъ—11 р. 50 к. и на полгода—6 руб., ДЛЯ ИНОГОРОДНЫХЪ съ пересылкою на годъ—13 руб. и на полгода—7 руб.

ПОДПИСКА ИСКЛЮЧИТЕЛЬНО принимается въ конторѣ редакціи газеты "Кавказъ", помѣщающейся въ домѣ Н. Г. Зубалова, на Атаманской улицѣ, противъ семинаріи, въ Тифлисѣ.

Газета "Кавказъ" будетъ выходить по три раза въ недѣлю и согласно прежней программѣ.

Редакторъ—издатель *Сталинскій.*

Պերճի նախկին ֆոտոգրաֆիայն, որ գտնւում է Միխայելովսկի կամրջի վերայ, այժմ անցել է պ. Տէր—Ղևոնդեանի և Յովհաննիսեանի ձեռքը, որից գործադրութիւն է սկսել և շարունակւում է: Նոյն պարոնները երկու տարի հետէ շրջագայելով Ռուսաստանի զանազան քաղաքները աւելի հասարակութեանց գոհ են թողած մեզ, որ և եղել են, իրանց տուած պատկերներով: Այժմ գալով Թիֆլիս և բանալով յիշած ֆոտոգրաֆիայն, դէպի իրանց են հրաւիրում յարգոյ հասարակութեան ուշադրութիւնը, վստահ լինելով միանգամայն, որ պակաս գոհացուցիչ չէ լինելու իւրեանց գործը և Թիֆլիսում, եթէ յարգելի հասարակութիւնը կհաճենայ պատւել նորանց իւրեանց այցելութեամբ:

Մեղուի խմբագրատանը վաճառւում են հետևեալ հայերէն գրքերը:

Ա.)

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.

1) "ԱՇՏՕՆԻ ԸՆՏԱՆԻՔ„ թարգմանութիւն Տ. Ն. Ա. գինն է 20 կ.

2) „ՍԷՐ և ՄԱՀ„ ողբերգութիւն, հեղինակ. Գ. Բարխուդարեանի, գինն է 40 կ.

3). «ԲԼՕՄԵԼԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ», թարգմանութիւն Ա. Նահապետեանի, գինն է 40 կ.

4). «ԵՐԿՈՒ ՔՈՅՐ» վէպ Գիւղական կեանքից. հեղինակ. Գ. Աղայեանի, գինն է 50 կ.

5). "ՄՇԱԿ„ (պատկեր) գործ Ա. Բժշկեանց. գինն է 5 կ.

Բ.)

ՅՕԴՈՒՍ Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆ
ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ:

6). ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՎԵԶՈՒՎԵԱՆ ՀՐԱԲՈՒԽ ՍԱՐԻ ՎԵՐԱՅ, հեղինակ. Վ. Խօջայեանի, գինն է 1 ռուբ.

7) ՎԻԼԼԷՍ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ, թարգմանեաց Օր. Գ. Յովհաննիսեան, գինն է 30 կ. (ուսումնարաններին համար 20 կոպ.)

Գ.)

ՏՊ. 'Ի ԹԷՈԴՈՍԻԱ:

8). ՁԵՆԻԱԹ—ԴԵՆԻԱԹ, (գրաբար չափ. տպագրուած) և ՄԵԹՆԻՄ ԻՐԵՆ ԽՈՍՏՑՐ ՍՄ, (Վօդէվիլ չորս տպագրուած) գործ Յ. Գեղամեանի, գինն է 50 կ.

Այս բոլոր գրքերից 50-ական օրինակ գնողներին 25% զիջումն կլինի:

Դ.)

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.

9). ՎԻՃԱԿԱՑ ՏԵՂ,—Տիլիէրի, թարգ. պ. Բարխուդարեանցի: Գինն է մի թղթի վերայ—1 ռ. 20 կ. և հասարակ թղթի վերայ—1 ռ.

Կուլլու Նիկոլաևսկի փողոցում Բլյումաստէնի տանը ծախւում է Նոր ֆայտոն վերջին ֆասոնի, բերուած Օդեսից, Հարցանել Մավրիկիևին, և Համբ. Էնֆիաճեանցին, իւր վաճառատանը:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ 10-го НОЯБРЯ 1873 г. Г. ТИФЛИСЪ. Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ. Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ. Տպարան Հ. Էնֆիաճեանց և Ընկ. Տուն Բժշկեանց Ռօսինեանց.